ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 59-72-07, Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր №

№ 07/22.1.2-3006/14
«22» 05 2014 թ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Ձեր՝ 19.05.2014թ. 219-ի 9 գրության՝ հայտնում ենք հետևյալը.

1. ***Իրականացնում է արդյո՞ք ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ստացված էլեկտրոնային հարցումների հաշվառում:***

ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական էլեկտրոնային փոստով ստացված հարցումների և դիմումների հաշվառումն իրականացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի քարտուղարության, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի, լիցենզավորման և թույլտվությունների գործակալության, շուկայի վերահսկողության պետական տեսչության, մտավոր սեփականության գործակալության կողմից:

2. ***Քանի՞ էլեկտրոնային հարցում է ստացել նախարարությունը 2013 թվականին:***

ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի քարտուղարության՝ secretariat@mineconomy.am էլեկտրոնային փոստով, 2013թ ընթացքում ստացվել է 102 դիմում և հարցում, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի՝ press@mineconomy.am էլեկտրոնային փոստով, ստացվել է 105 դիմում և հարցում:

Կատարող՝ Ցոլինե Ալեքսանյան
597-172

Լիցենզավորման և թույլտվությունների գործակալությունն էլեկտրոնային փոստով 2013թ. ընթացքում ստացել է 2 դիմում-հայտ՝ լիցենզիա ստանալու և լիցենզիայի գործողության ժամկետը դադարեցնելու վերաբերյալ: Շուկայի վերահսկողության պետական տեսչությունն էլեկտրոնային փոստով 2013թ. ընթացքում ստացել է 70 դիմում և հարցում, իսկ Մտավոր սեփականության գործակալությունը ստացել է 120 դիմում և հարցում:

Հարգանքով՝

ԷՄԻԼ ՏԱՐԱՍՅԱՆ